ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 313-Հ

«14» 07 2023 թ. գ. Երևան

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶ ԱՊՐԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի՝ «Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ապրես Գրիգորյանի (լիազորությունները կասեցված) նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» 2023 թվականի հուլիսի 13-ի որոշումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կոտայքի մարզի դատախազության դատախազ Ապրես Գրիգորյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023 թվականի հունիսի 7-ից Ա. Գրիգորյանի լիազորությունները կասեցված լինելու պայմաններում վերջինիս հսկողության ներքո գտնվող քրեական վարույթները և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերը բաշխվել են Կոտայքի մարզի դատախազության այլ դատախազների միջև, ինչը հանգեցրել է Կոտայքի մարզի դատախազության դատախազների աշխատանքների ծանրաբեռնվածության աճին, ինչով պայմանավորված՝ ՀՀ

դատախազության տվյալ ստորաբաժանման աշխատանքների կազմակերպումը պահանջում է համարժեք լուծումներ, սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման՝ ելնելով Կոտայքի մարզի դատախազության գործառույթների պատշաճ իրականացումն ապահովելու հանրային շահերից:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ